

**« Հ Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ Ի Փ Ո Ւ Ն Ի Կ Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք ՈՒ Մ Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Վ Ա Ս Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Հ Ս Կ Ո Ղ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ր Դ Յ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն »**

«04» հոկտեմբերի 2013 թ.

գ. Փանիկ

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 112 կարգադրության, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արտավազ Գևորգյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Արտյոմ Սարգսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Զորիկ Խաչատրյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Փանիկի գյուղական համայնքի ղեկավար Հրաչիկ Սալյանգարյանի, Փանիկի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի սեպտեմբերի 13-ին և ավարտվել է 2013 թվականի սեպտեմբերի 27-ին:

***Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝***

Փանիկի համայնքի ղեկավարի կողմից համայնքում կատարված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի նոյեմբերի 3-ի տեղեկանքը չնայած ներկայացվել է համայնքի ավագանու 2011 թվականի հունվարի 31-ի թիվ 2 նիստի քննարկմանը, սակայն այն սահմանված կարգով չի արձանագրվել ավագանու նիստերի արձանագրությունների գրանցամատյանում: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակվել և գործողության մեջ են դրվել միջոցառումների ժամանակացույց համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացման ուղղությամբ:

արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ և այդ մասին ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացվել է համապատասխան տեղեկատվություն:

- 1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի նախկին ավագանին իր 2007 թվականի հուլիսի 13-ի նիստում ընդունել է ավագանու կարոնակարգը, իսկ համայնքում 2011 թվականի հուլիսի 28-ին կայացած ընտրությունների արդյունում ձևավորված համայնքի նորընտիր ավագանին չի ընդունել իր կանոնակարգը: Չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված նորընտիր ավագանու առաջին նիստի անցկացման ընթացակարգը:
- 2) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ավագանին 2008 թվականի դեկտեմբերի 24-ի նիստում հաստատել է համայնքի 2009-2012 թթ. զարգացման ծրագիրը:

Համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված թվով 10 ծրագրային աշխատանքներից կատարվել են՝ ոռոգման նոր ջրատարի կառուցման (Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան ծրագրի ներդրում՝ 40000.0 հազ. դրամ, համայնքի բյուջեից կատարված ներդրում՝ 6000.0 հազ. դրամ), ներհամայնքային և դաշտ տանող ճանապարհների փոսային նորոգման (համայնքի բյուջե՝ 594.0 հազ. դրամ), հեղեղատարների մաքրման և պատնեշների վերականգնման (համայնքի բյուջե՝ 250.0 հազ. դրամ), համայնքի անապահով ընտանիքներին դրամական օգնության տրամադրման (համայնքի բյուջե՝ 4505 հազ. դրամ) աշխատանքները: Չեն կատարվել մշակույթի տան հիմնանորոգման, դպրոցի նոր խաղահրապարակի կառուցման, հակակարկտային կայանքների տեղադրման, խմելու ջրի պահուստային ջրամբարի վերականգնման, գյուղապետարանի շենքի վերանորոգման և զբոսայգու բարեկարգման աշխատանքները:

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը կազմված է որոշակի թերություններով: Նրանում լիարժեք տեղեկություններ չեն ներկայացվել համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի մասին, չեն տրվել քառամյա ժամկետում համայնքի բյուջեի կատարման, ինչպես նաև հողի հարկի, գույքահարկի և հողի վարձակալական վճարների ապառքների հավաքագրման կանխատեսումներ, փաստաթղթում բացակայում են նախատեսված աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեից կատարվելիք ներդրումների ապահովման հիմնավորումները: Փաստաթղթում նախատեսված ծրագրային աշխատանքներն ունեն ընդհանուր բնույթ, նրանցում չեն նշվել առաջադրված հիմնախնդիրների նկարագրությունները, ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, աշխատանքների ծավալները, ֆինանսավորման աղբյուրները, կատարման հստակ ժամկետներն ու իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումները:

Համայնքի ավագանին չի անդրադարձել համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված ծրագրային աշխատանքների կատարման ընթացքին:

Չնայած նրան որ գյուղապետարանում առկա է համայնքի 2013-2016 թթ. զարգացման ծրագիրը, սակայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարի կողմից այն սահմանված կարգով ավագանու

քննարկմանը չի ներկայացվել և այն հաստատելու վերաբերյալ ավագանու որոշում չի կայացվել:

Համայնքի զարգացման նոր ծրագրին նույնպես բնութագրական են վերը նշված թերությունները:

- 3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները (ավագանու որոշումներ՝ 20.12.2010թ, թիվ 42-Ն, 09.12.2011թ, թիվ 26-Ն և 25.12.2012թ, թիվ 22-Ն):

Համայնքի ավագանու 27.01.2011թ, թիվ 3-Ն, 23.01.2012թ, թիվ -Ն, 18.01.2013թ, թիվ 1-Ն, որոշումներով հաստատել է համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը՝ համայնքի 2010, 2011 և 2013 թվականների բյուջեների կատարման վերաբերյալ:

Որոշումներում բացակայում են հղումները «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ և 35-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, իսկ որոշումները սահմանված կարգով չեն ձևակերպվել հավելվածի տեսքով (հիմք՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մաս):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին թվով 12 որոշումներ է կայացրել համայնքի 2010, 2011 և 2012 թվականների բյուջեներում փոփոխություններ կատարելու համայնքի ղեկավարի առաջարկությունների վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 20.10.2010թ, թիվ 35-Ն, թիվ 36-Ն, 20.01.2011թ, թիվ 2-Ն, 20.09.2011թ, թիվ 18-Ն, 19-Ն, 20-Ն, 15.05.2012թ, թիվ 7-Ն, 8-Ն, 18.01.2013թ, թիվ 2-Ն և այլն):

Համայնքի բյուջեում կատարված փոփոխությունների վերաբերյալ ավագանու որոշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են՝ բառեր կամ թվեր այլ բառերով կամ թվերով փոփոխարինելու միջոցով, բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով, բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով, բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:

Համայնքի ավագանու առանձին նիստերում 1-ից ավելի որոշումներ են ընդունվել համայնքի բյուջեում փոփոխություններ կատարելու հարցերի վերաբերյալ, մինչդեռ այդ փոփոխությունները կարելի էր կատարել մեկ իրավական ակտով:

- 4) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկման, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն չի իրականացրել և այդ հարցերի վերաբերյալ որոշումներ չի կայացրել:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, համայնքի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյակային հաղորդումներ չի ներկայացրել համայնքի ավագանուն:

Համայնքը օրենքով սահմանված կարգով վարկեր չի ստացել:

- 5) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում համայնքի ավագանին թվով 2 որոշումներ է կայացրել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշման վերաբերյալ: Համայնքի ավագանու 20.09.2011 թիվ 20-Ն որոշմամբ համայնքի 2011 թվականի բյուջեից 200.0 հազ. դրամ է հատկացվել համայնքի սոցիալատեսական պահով ընտանիքների կողմից օգտագործված ոռոգման ջրի վարձը վճարելու համար, որում չեն նշվել շահառուների անունները և ըստ շահառուների վճարված գումարների չափերը:
- Իսկ ավագանու 02.03.2012 թ. թիվ 4-Ն որոշմամբ 120.0 հազ. դրամ գումար է հատկացվել «Փանիկ» ամսաթերթի խմբագրությանը, որում համապատասխան հղում չի կատարվել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները որոշելու ավագանու իրավասությունը սահմանող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի դրույթին:
- 6) Համայնքի ավագանին թվով 2 որոշումներ է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ, որոնց ստուգման արդյունքները ներկայացված են սույն մասի 15-րդ կետում:
- 7) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել և այդ հարցի վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
- 8) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7<sup>1</sup>-րդ կետի համաձայն համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկման դեպքեր չեն արձանագրվել:
- 9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականներին համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու վերաբերյալ: Որոշումներով սահմանված համայնքի ղեկավարի աշխատավարձի չափերը համապատասխանում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ սահմանված տոկոսաչափին, սակայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները:
- 10) Համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, դրանց վերակազմակերպման կամ լուծարման մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 11) Համայնքի ղեկավարի առաջարկությամբ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

12) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը հանված է (08.12.11 ՀՕ-342-Ն):

13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն համայնքի ավագանին որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 20.12.2010թ, թիվ 37-Ն, 09.12.2011թ, թիվ 21-Ն և 25.12.2012թ, թիվ 19-Ն): «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու 09.12.2011թ, թիվ 21-Ն որոշմամբ տեղական տուրքերի դրույքաչափեր չեն սահմանվել նոր շենքերի և շինությունների կառուցման թույլտվության, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման աշխատանքների, առևտրի, հանրային սննդի, գվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության, արտաքին գովազդ տեղադրելու համար: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները:

Տեղական հարկերի տեսակների և դրույքաչափերի սահմանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

14) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափեր սահմանելու վերաբերյալ ավագանին որոշումներ չի կայացրել:

15) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն համայնքի ավագանին թվով 3 որոշումներ է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ:

Ավագանու 07.04.2011թ, թիվ 8-Ա որոշմամբ ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, տվյալ հողի կադաստրային արժեքով, քաղաքացուն է օտարվել նրա սեփականությունը հանդիսացող կենցաղի շենքի սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ 587 քա.մ հողամասը:

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն հանդիսացող արտադրական նշանակության 08-113-0026-0001 կոնտուրում գտնվող ծածկասրահի համալիրը /շվաքարանը/, պահեստային շինությունը, պահակատան կառույցը և պահեստային կառույցը աճուրդով օտարելու և օտարման մեկնարկային գները հաստատելու վերաբերյալ /ավագանու որոշում՝ 15.05.2012թ. թիվ 9-Ա/: Որոշման մեջ համապատասխան հղում չի կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթին և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի հաստատվել աճուրդի պայմանները /աճուրդի կանոնակարգ/: Որոշման մեջ նշում չի կատարվել նաև գույքի մեկնարկային գները հաստատելու համար հիմք հանդիսացած գույքի շուկայական արժեքը գնահատած կազմակերպության եզրակացության մասին /հիմք՝ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ/:

Ավագանու 08.04.2013թ, թիվ 6-Ա որոշմամբ «Փանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անշարժ գույքի զբաղեցրած, ինչպես նաև դրա սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ

համայնքի սեփականություն հանդիսացող 3.29 հա հողամասը նվիրաբերվել է Հայաստանի Հանրապետությանը:

- 16) Համայնքային նշանակության փողոցների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 17) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանին որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար գյուղապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 20.12.2010թ, թիվ 39-Ն, 09.12.2011թ, թիվ 23-Ն և 25.12.2012թ, թիվ 20-Ն):

Ընդունված որոշումներում լիարժեք հղումներ չեն կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի և «տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի «ՀՀ Շիրակի մարզի Փանիկի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 55-Ա հրամանին:

Համայնքի ավագանու 11.07.2013թ, թիվ 3-Ն որոշմամբ հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների նոր թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն ուժը կորցրած չի ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումը: Որոշմամբ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի համար հաստատված պաշտոնային դրույքաչափը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի դրույթին, համաձայն որի յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձը չի կարող գերազանցել տվյալ համայնքի ղեկավարի աշխատավարձի 80 տոկոսը:

- 18) Համայնքի ավագանին չի հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:
- 19) Համայնքի ավագանին սահմանված կարգով հաստատել է համայնքի սեփականության 2010-2012 թվականի գույքագրման փաստաթղթերը (ավագանու որոշումներ՝ 20.12.2010թ, թիվ 40-Ն, 09.12.2011թ, թիվ 24 և 25.12.2012թ, թիվ 21-Ա):

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջը և սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո մեկշաբաթյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում չի կատարել համապատասխան փոփոխություն և այն չի ներկայացրել ավագանու առաջիկա նիստի հաստատմանը:

### **1.Ֆինանսների բնագավառ**

- 1) Փանիկի համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կազմել և սահմանված ժամկետներում համայնքի ավագանու հաստատման է ներկայացրել համայնքի 2011-2013 թվականների բյուջեների նախագծերը, համայնքի 2011-2012 թվականների բյուջեների կատարման տարեկան

հաշվետվությունները և դրանցում առաջարկվող փոփոխությունների նախագծերը, որոնց ստուգման արդյունքների մանրամասները ներկայացված են սույն ակտի 3-րդ էջի 3-րդ կետում:

Համայնքի բյուջեների կատարողականների տարեկան հաշվետվություններն ավագանին քննարկել և հաստատել է առանց աուդիտորական եզրակացության:

2) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը (հարցի վերաբերյալ ստուգման արդյունքները ներկայացված են ակտի 5-րդ էջի 13-րդ կետում):

3) Համայնքի ղեկավարը ապահովել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.1 մասի դրույթով սահմանված՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումների կազմակերպման և վերահսկման պարտադիր լիազորությունները:

2010թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 10962.2 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 12226.9 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 111.5%-ով, կամ ավել է հավաքագրվել 1264.7 հազար դրամ:

2011թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 10618.4 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 10979.1 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 103.4%-ով, կամ ավել է հավաքագրվել 360.7 հազար դրամ:

2012թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 9061.1 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 9281.3 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 102.4 %-ով, կամ ավել է հավաքագրվել 220.2 հազար դրամ:

2013 թվականի 9 ամիսների համայնքի բյուջեով նախատեսված 5544.4 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 5563.9 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 100.4 %-ով, կամ ավել է հավաքագրվել 19.5 հազար դրամ:

4) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2 մասի համաձայն, համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկեր, տեղական տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել՝ այդպիսիք չլինելու պատճառով:

5) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը ավագանու հաստատմանը չի ներկայացրել:

6) Համայնքի ղեկավարը ամբողջությամբ ապահովել համայնքի բյուջեի եկամուտների կատարումը: Համայնքի վարչական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարումների, դրամաշնորհների, ծառայությունների և ապրանքների ձեռ բերման, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնության տրամադրման, սուբսիդիաների և այլ ընթացիկ ծախսերի կատարման համար, իսկ ֆոնդային բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են լրիվությամբ:

Գյուղապետարանում չեն պահպանվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջները: 2011-2012թթ. ընթացքում ընթացիկ տարվա համար գնումների պլան չի կազմվել և չի հրապարակվել:

2013 թվականի գնումների պլանը հաստատվել է պատվիրատու ղեկավարի կողմից և այն հրապարակվել է Gnumner.am կայքում, սակայն ըստ օրենսդրության պատվիրատու ղեկավարի կողմից պետք է սահմանվեին գնումների համակարգող և պատասխանատու ստորաբաժանում, որը չի կատարվել:

## **2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ**

1. Փանիկի համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի ու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմման գործառույթներ չեն իրականացվել:

2. Համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու գործընթացներ չեն իրականացվել:

3. Համայնքի ղեկավարի կողմից իրականացվել են համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին 5 իրազեկումներ և տրամադրվել են թվով 5 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ: Համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 26-ի N 48, 2011 թվականի հոկտեմբերի 25-ի N 52 և 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 57 որոշումներով քաղաքացիներ՝ Ա. Հովհաննիսյանին, Ա. Սերոբյանին և Գ. Դավեյանին տրվել են ճարտարապետահատակագծային առաջադրանքներ իրենց սեփականությունը հանդիսացող հողամասերում ավտոտնակ կառուցելու համար, 2011 թվականի նոյեմբերի 15-ի N 54 որոշմամբ քաղաքացի Է. Կարապետյանին, տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ իր սեփականությունը հանդիսացող հողամասում անհատական բնակելի տուն կառուցելու համար և 2012 թվականի հունվարի 25-ի N 4 որոշմամբ քաղաքացի Մ. Ճավոռյանին տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք իր սեփականությունը հանդիսացող հողամասում սպասարկման օբյեկտ կառուցելու համար:

ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացվել է թվով 4 ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցման գործընթացներ:

4. 2011 թվականի նոյեմբերի 20-ի N 58 և 2012 թվականի հունվարի 25-ի N 5 որոշումներով՝ քաղաքացիներ՝ Ա. Սերոբյանին և Գ. Դավեյանին տրվել են շինարարության թույլտվություններ իրենց սեփական հողամասերում ավտոտնակներ կառուցելու համար և 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 54 և 2012 թվականի հունվարի 30-ի N 6 որոշումներով՝ քաղաքացիներ Է. Կարապետյանին և Գ. Բաղդասարյանին տրվել են շինարարության թույլտվություններ իրենց սեփական հողամասերում անհատական բնակելի տներ կառուցելու համար:

Քաղաքաշինական գործունեության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը կազմվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, սակայն համայնքի ղեկավարի կողմից չի ապահովվել ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման



թույլտվության կարգի 10-րդ կետի պահանջը և տրամադրված շինարարության թույլտվության մասին սահմանված կարգով ՀՀ Շիրակի մարզպետին չի իրազեկվել:

ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի հուլիսի 23-ի N 214-Ա որոշմամբ առաջարկվել էր Փանիկի համայնքի ղեկավարին ապահովել ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգի 10-րդ կետի պահանջը:

5. Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ չի ձևակերպվել:
6. Համայնքում ինքնակամ շինարարության կանխման ու կասեցման դեպքեր չեն արձանագրվել և օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
7. Համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման, պահպանման և կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների կատարման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
8. Համայնքի ղեկավարի կողմից կատարվել են համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների ամենամյա գույքագրում և գույքագրման փաստաթղթերը սահմանված կարգով ներկայացվել են համայնքի ավագանու հաստատմանը:
9. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն չի տրամադրվել,
10. Համայնքային սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի ու այլ կառուցվածքների շահագործման կազմակերպման և կառավարման վերաբերյալ գործառույթներ չեն իրականացվել:
11. Համայնքում բազմաբնակարան բնակելի շենքերի բացակայությամբ պայմանավորված դրանց կառավարմանն ուղղված գործառույթներ չեն իրականացվել:

### **3. Հողօգտագործման բնագավառ**

1. Փանիկի գյուղական համայնքը կառավարության սահմանված կարգով կազմված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա չունի՝ համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

2. Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 598.28 հա, որից վարելահող՝ 86.93 հա, արոտ՝ 488.46 հա և այլ հողեր՝ 19.73 հա:

Ընդերքօգտագործման հողերը կազմում են 0.48 հա, որոնք օգտագործման տրամադրված չեն և չեն շահագործվում:

Գյուղապետարանում առկա է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար կնքված և պետական գրանցման ենթարկված թվով 55 վարձակալության պայմանագրեր, որոնցից 52-ը կնքվել են ընդամենը 83.81 հա վարելահողերի համար՝ 1978.0 հազ. դրամ վարձավճարով և 3-ը՝ 3.0 հա այգու համար՝ 165.0 հազ դրամ վարձավճարով:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3.12 հա վարելահողը և 488.46 հա արոտը օրենքով սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն:

Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

01.10.2010-31.12.2010թ. ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 432.2 հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 299.6 հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

2011թ. բյուջեով նախատեսված 1689.0 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 1545.4 հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

2012թ. բյուջեով նախատեսված 1689.0 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 1574.0 հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

01.01.2013-01.09.2013թթ. ընկած ժամանակաշրջանում բյուջեով նախատեսված 602.1 հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 526.625 հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

01.10.2010թ.-01.09.2013թ. ժամանակաշրջանում համայնքային և պետական սեփականություն համարվող հողամասերի աճուրդով օտարում չի իրականացվել:

Փաստաթղթերի դառնմասիությունից պարզվել է, որ համայնքի ղեկավարը առանց վարձակալության պայմանագրեր կնքելու համայնքային սեփականություն հանդիսացող 4.0 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողերը 2010 թվականից վարձակալության է տրամադրել համայնքի բնակիչներ՝ Աստղիկ Գրիգորյանին, Սեյրան Բաղդասարյանին, Արմեն Գևորգյանին և մինչև օրս գանձել է վարձավճար: Արդյունքում խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջները /օգտագործման տրամադրման կարգի խախտում/ և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան սահմանվել է պատասխանատվություն:

Համայնքային սեփականության 0.3492 հա (ծածկագիր 0307-0001) և 0.6508 հա (ծածկագիր 0306-0001) հողերը 2010 թվականի մայիսի 26-ին օգտագործման իրավունքի պետական գրանցման են ենթարկվել «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից, որպես գյուղատնտեսական նշանակության արտոններ /օգտագործման իրավունքի վկայականներ՝ թիվ 2335194 և թիվ 2335195/, սակայն փաստացի օգտագործվում են որպես արդյունաբերական նշանակության հողեր /ասվալտի արտադրության արտադրամաս/: Համայնքի ղեկավարը վերահսկողություն չի իրականացրել նշված հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ /հիմք՝ ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի, 1-ին մասի, 2-րդ կետ/, որի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան սահմանվել է պատասխանատվություն:

3. Փանիկ համայնքի գյուղացիական տնտեսություններում հաշվառված 1295 գլուխ խոշոր եղջերավոր անասունների առկայության պայմաններում 488.46 հա արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն:

4. 01.10.2010թ.-01.09.2013թ. ընկած ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

5. Օրենքով սահմանված կարգով իրականացվել են համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման գործընթացները:

6. Պատշաճ վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 3 գեոդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ:

#### 4. Տրանսպորտի բնագավառ

- 1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ համայնքի ղեկավարի կողմից չեն իրականացվել:
- 2) Համայնքում հասարակական տրանսպորտի, ինչպես նաև համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների ու կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, համայնքի ղեկավարի կողմից այդ ոլորտի գործունեության կազմակերպման և կառավարման ուղղությամբ գործառույթներ չեն իրականացվել:
- 3) Իրավասու մարմինների կողմից համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման, հանման հաստատման և թույլատրման առաջարկություններ չեն ստացվել և այդ ոլորտում համայնքի ղեկավարի կողմից գործառույթներ չեն իրականացվել:
- 4) Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ կառավարության սահմանած կարգով և ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհների վերաբերյալ լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա չի կազմվել և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

#### 5. Առևտրի և ծառայությունների բնագավառ

- Փանիկ համայնքի տարածքում գործում է առևտրի՝ 11, հանրային սպասարկման՝ 1 և կենցաղսպասարկման՝ 2 օբյեկտներ:
1. Համայնքի ղեկավարի կողմից ստեղծված խումբը պարբերաբար իրականացրել է շրջայցեր առևտրի օբյեկտներում, գրանցել է նկատված խախտումները, կատարել է զգուշացումներ և առևտրի օբյեկտներից մեկի համար սահմանել է տուգանք՝ 20 000 դրամի չափով:
  2. Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի իրականացման համար ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով տրվել է 11 թույլտվություն:
  3. Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու համար թույլտվություն ստանալու համար դիմողներ չեն եղել:
  4. Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրամադրվել՝ դիմողներ չլինելու պատճառով:
  5. Համայնքի տարածքում «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասի համաձայն թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառքի թույլտվություն ստանալու համար դիմողներ չեն եղել:

6. Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազի վաճառքի թույլտվություն է տրամադրվել 2 տնտեսավարող սուբյեկտի:

## 7. Այլ բնագավառներ

1) Համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել են համայնքի ավագանու 24 նիստեր, որոնցում քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող 57 հարցեր, ընդունվել են նորմատիվ և անհատական բնույթի նույնքան որոշումներ:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվել են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների 1 գրանցամատյան, որը սահմանված կարգով համարակալված, թելակարված և կնքված է համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ղեկավարը 25.10.2010թ-20.12.2010թ, 07.04.2011թ-08.07.2011թ, 17.08.2012թ-25.12.2012թ, 08.04.2013թ-11.07.2013թ. ընկած ժամանակահատվածներում չի ապահովել ոչ պակաս քան երկու ամիսը մեկ անգամ ավագանու նիստերի անցկացումը /հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված/:

Չի ապահովվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը և ավագանու նիստերի ոչ բոլոր օրակարգերն են հաստատվել ավագանու որոշմամբ: Համայնքի ավագանու առանձին նիստեր սահմանված կարգով չեն արձանագրվել ավագանու նիստերի արձանագրությունների գրանցամատյանում և չեն ստորագրվել ավագանու անդամների կողմից: Ավագանու կողմից ընդունված որոշումների հերթական համարակալումը խախտված է, իսկ առանձին դեպքերում ընդունված իրավական ակտերի բնույթի մասին՝ «Ն» (նորմատիվ), «Ա» (անհատական) տառերի նշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներին (ավագանու որոշումներ՝ 01.02.2012թ. թիվ 2-Ա, 02.03.2012թ. թիվ 7-Ն, 10.04.2012թ. թիվ 6-Ա և այլն):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի նորընտիր ավագանին չի ընդունել ավագանու կանոնակարգը:

Համայնքի ղեկավարը թերություններով է կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով սահմանված համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունները՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան որոշումների ընդունման, արձանագրությունների կազմման և կարգադրությունների արձակման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու կողմից 2010-2013 թթ. ընդունված թվով 56 որոշումներից ՀՀ Շիրակի մարզպետարան է առաքել 19-ը:

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգը և համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ բնույթի առանձին իրավական ակտեր պետական իրավական փորձաքննության համար չի ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն (ավագանու կանոնակարգի ընդունում, համայնքի զարգացման քառամյա ծրագրի հաստատում, համայնքի բյուջեի և նրանում կատարված փոփոխությունների հաստատում, բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների հաստատում, օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանում և այլն):

Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու նիստերի ոչ բոլոր օրակարգերի նախագծերն են ձևավորվել նիստից առնվազն տասը օր առաջ: Նիստերի օրակարգերի նախագծերը, դրանցում ընդգրկված հարցերի որոշումների նախագծերը և համապատասխան փաստաթղթերը ոչ միշտ են տրամադրվել համայնքի ավագանու անդամներին նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ, իսկ արտահերթ նիստեր հրավիրելու դեպքում նիստից մեկ օր առաջ (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներ):

Աշխատակազմում սահմանված կարգով հաշվառում չի տարվել ավագանու նիստերին ավագանու անդամների մասնակցության վերաբերյալ:

Համայնքի ավագանու որոշումներին բնութագրական են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման տարբեր խախտումներ: Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի առանձին որոշումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի համաձայն չեն պարունակում հղումներ, թե դրանք ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի մասի համաձայն կամ ի կատարումն են ընդունվել, իսկ առանձին որոշումներում կատարված հղումները սխալ են, թերի կամ ոչ հստակ (ավագանու որոշումներ՝ 05.10.2010թ, թիվ 33-Ա, 20.12.2010թ, թիվ 35-Ն, 20.09.2011թ, թիվ 18-Ն, 15.05.2012թ, թիվ 7-Ն և այլն):

2) Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1՝ կետի պահանջը և իր կողմից ընդունված ոչ բոլոր անհատական ակտերն է սահմանված ժամկետում ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:

3) Համայնքի զարգացման 2013-2016 թթ ծրագիրը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն չի հաստատվել ավագանու որոշմամբ:

4) Համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը հաստատվել է համայնքի ղեկավարի 2010 թվականի հուլիսի 16-ի թիվ 22 որոշմամբ:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջը և գյուղապետարանի աշխատակազմի նոր կանոնադրությունը, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների նոր կանոնադրությունները չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը:

5) Գյուղապետարանում առանձնացված ստորաբաժանումների բացակայությամբ պայմանավորված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքները հաստատելու վերաբերյալ որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

6) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը գյուղապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների 2010-2013 թվականների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ որոշումների նախագծերը ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը: Հարցի վերաբերյալ ստուգման մանրամասները ներկայացված են սույն ակտի 5-րդ էջի 17-րդ կետում:

7) Համայնքի ղեկավարը համայնքային ենթակայության երաժշտական դպրոցը և մանկապարտեզը համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպելու վերաբերյալ

որոշման նախագիծը ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը (ավագանու որոշում 21.03.2011թ, թիվ 5-Ա)

- 8) Համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված համայնքի ղեկավարի կողմից դրանց խորհրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակում համայնքի ղեկավարի 16.08.2013թ. թիվ 8 կարգադրությամբ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի հիմքով զբաղեցրած պաշտոնից ազատվել է գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը: Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ղեկավարի տեղակալի և աշխատակազմի քարտուղարի պաշտոններում նշանակումներ կատարելու վերաբերյալ իրավական ակտեր չեն ընդունվել:
- 10) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների ղեկավարների պաշտոններում նշանակում կատարելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:
- 11) Համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 12) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել և միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի կողմից թվով 3 առաջարկություններ են ներկայացվել համայնքի ավագանուն համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու վերաբերյալ: Հարցի վերաբերյալ ստուգման մանրամասները ներկայացված են ակտի 5-րդ էջի 15-րդ կետում:
- 14) Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:
- 15) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի փողոցների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների անվանման կամ վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություններ չեն ներկայացվել:
- 16) Համայնքի ղեկավարի կողմից անշարժ գույքի հասցեավորման վերաբերյալ ընդունվել են թվով 46 որոշումներ: Որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, 16-րդ կետի և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներին:
- 17) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 198 որոշում և արձակվել 47 կարգադրություն: Նշված իրավական ակտերի արձնագրությունների բոլոր

գրանցամատյանները սահմանված կարգով թելակարված և կնքված չեն համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ղեկավարը ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ կազմակերպելու վերաբերյալ ընդունել է թվով 18 որոշումներ, համաձայն որոնց համայնքի բյուջեից կատարել է ընդհանուր գումարով 4468.5 հազ. դրամի հատկացումներ: Որոշումներով չեն հաստատվել միջոցառումների ծրագրերը և համապատասխան ծախսերի նախահաշիվները: Հատկանշական է այն փաստը, որ համայնքի բյուջեից գումարներ են հատկացվել նաև այնպիսի տոների հետ կապված միջոցառումներ անցկացնելու համար, որոնք Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չեն (մասնավորապես՝ ՀՀ 23 փետրվարի):

Հարկ է նշել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպումը հանդիսանում է պետության պատվիրակած լիազորություն: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն պետության պատվիրակած լիազորություններն իրականացվում են օրենքով կամ կառավարության սահմանած կարգով և այն ամբողջովին ու պարտադիր ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին: Իսկ եթե գործունեության այդ ոլորտում պետության կողմից լիազորությունների պատվիրակում չի կատարվել և համայնքի ղեկավարը նշված միջոցառումները ֆինանսավորել և իրականացրել որպես համայնքի ղեկավարի կամավոր լիազորություն, ապա «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները որոշելու համար այն պետք է ներկայացնել ավագանու քննարկմանը, որը չի կատարվել:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 2-րդ կետի համաձայն հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը հանդիսանում է համայնքի ղեկավարի կամավոր լիազորություն: Իսկ նույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ կետի համաձայն համայնքի ավագանուն է վերապահված համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշման ընդունման իրավասությունը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նշված դրույթների պահանջները և առանց համայնքի ավագանու համապատասխան որոշումների ընդունման թվով 24 որոշում է կայացրել համայնքի թվով 130 կարիքավոր ընտանիքների, ուսանողների և առանձին անձանց միանվագ դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ, տրամադրված գումարի չափը կազմում է 4505.0 հազ. դրամ (համայնքի ղեկավարի որոշումներ՝ 22.11.2010թ. թիվ 42, 27.12.2011թ. թիվ 60, 20.12.2012թ. թիվ 71, 18.04.2013թ. թիվ 39 և այլն):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանու իրավասություն է հանդիսանում համայնքի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունների հաստատումը: Համայնքի ղեկավարը չի ապահովել նշված դրույթի պահանջը և որոշումներ է կայացրել համայնքի բյուջեում փոփոխություններ

կատարելու վերաբերյալ (որոշումներ՝ 18.10.2010թ. թիվ 34, 06.12.2010թ. թիվ 46, 17.12.2010թ. թիվ 48, 05.11.2012թ. թիվ 68 և այլն):

- 18) Որպես պետության պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և ղեկավարվել է համայնքում անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքում անասունների հիվանդությունների բռնկման դեպքեր չեն արձանագրվել:
- 19) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարման աշխատանքներ չեն իրականացվել:
- 20) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և փարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:
- 21) Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է համայնքային գիրք (ծխամատյան) և կազմակերպվում է համայնքի բնակիչների հաշվառումը:
- 22) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել:
- 23) Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից կատարվում են քաղաքացիների ընդունելություններ, օրենքով սահմանված կարգով քննության են առնվում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:
- 24) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ավագանու կողմից որոշում չի ընդունվել համայնքի ղեկավարին կից՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ: Համայնքի ղեկավարի կողմից խնամակալություն կամ հոգաբարձություն չի սահմանվել:
- 25) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի ղեկավարի կողմից տրվել են երեխայի ծննդի պետական գրանցման վերաբերյալ գրավոր հայտարարություններ:
- 26) Գյուղապետարանում օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվել են տարածքային զինվորական կոմիսարիատ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքի զինապարտ քաղաքացիների կողմից իրենց պարտականությունները խախտելու դեպքեր չեն արձանագրվել:



## ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն գյուղապետարանի աշխատակազմի նոր կանոնադրությունը չի ներկայացրել համայնքի ավագնու հաստատմանը:
2. ՀՀ կառավարության սահմանված կարգով աշխատակազմում չեն վարվում իրավական ակտերի հաշվառման մատյաններ:
3. Իրավական ակտերի հաշվառման մատյանների բացակայությամբ պայմանավորված ուսումնասիրության ենթարկված համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների, արձակած կարգադրությունների և աշխատակազմի քարտուղարի հրամանների համադրում չի կատարվել:
4. Աշխատակազմում սուսնաձևացված ստորաբաժանում (բաժին) չլինելու պատճառով, ստուգված ժամանակաշրջանում գյուղապետարանի կառուցվածքը հաստատելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
5. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Փանիկի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 4-ն են՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.2.3), գլխավոր մասնագետ-ֆինանսիստ (ծածկագիր՝ 2.3.1), առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1.1) և երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.3.1): Համայնքային ծառայության նշված 4 պաշտոններից թափուր է աշխատակազմի քարտուղարի պաշտոնը, իսկ մնացած 3-ը՝ օրենքով սահմանված կարգով զբաղեցված են: Համայնքի ավագանու համապատասխան որոշումներով 2010, 2011 և 2012 թվականների համար հաստատված գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համապատասխանում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Փանիկի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում նշված անվանումներին: Համայնքային ծառայողների մասով 2010-2013 թվականների համար հաստատված պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
6. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի վերջին անձնագիրը հաստատվել է համայնքի ղեկավարի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 12 որոշմամբ, իսկ մյուս 3 համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատվել են համայնքի ղեկավարի 2009 թ. փետրվարի 17-ի թիվ 5 որոշմամբ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից պաշտոններ չեն հանվել և նոր պաշտոններ չեն ավելացվել: Համայնքի ղեկավարի կողմից հաստատված պաշտոնների անձնագրերի բովանդակությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:
7. Համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը կատարվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի» առանձին դրույթների

թերություններով: Համայնքային ծառայողների առանձին անձնական գործերում բացակայում են պաշտոնի նշանակելու և դասային աստիճան շնորհելու մասին իրավական ակտերը, համայնքային ծառայողների թափոր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և ատեստավորումների համապատասխան հանձնաժողովների եզրակացությունները, համայնքային ծառայության կիսամյակային հաշվետվություններն ու դրանց վերաբերյալ անմիջական ղեկավարի եզրակացությունները, համայնքային ծառայողի կողմից իր անձնական գործի բոլոր նյութերին և գործունեության գնահատականներին ծանոթացված լինելու մասին վկայող փաստաթղթերը: Անձնական գործերում առկա փաստաթղթերի վերգրերը լրացված են թերի, իսկ գործերում առկա փաստաթղթերը չեն համարակալվել:

8. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական նոր կազմերը հաստատելու վերաբերյալ որոշում չի կայացվել: Համայնքի ղեկավարի կողմից չի ապահովվել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի 3-րդ կետի պահանջը և համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու 3 անդամներն ընդգրկվել են առանց ավագանու համապատասխան որոշման:
9. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից համապատասխան որոշում չի կայացվել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու վերաբերյալ:
10. ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարի 2009 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 21 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, սակայն սահմանված կարգով չի ապահովվել դրա պատշաճ իրագրելումը աշխատակազմի բոլոր աշխատակիցներին:
11. Աշխատակազմում սահմանված կարգով չեն վարվում «Համայնքային ծառայության թափոր տեղերի համար անցկացվող մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների գրառման», «Համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման» և «Համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման» համարակալված մատյաններ:
12. Ուսումնասիրությամբ պարզվել է, որ մրցույթի արդյունքներով համայնքային ծառայության պաշտոնների նշանակված աշխատակազմի համայնքային ծառայողների կրթության, համապատասխան ստաժի և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:
13. Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված գրանցամատյանային (Ձև NN 1, 2) տվյալներն արժանահավատ են:
14. Ստուգված ժամանակաշրջանում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար մասնագետի թափոր պաշտոնն զբաղեցնելու համար 19.03.2011թ. անցկացված մրցույթի,

աշխատակազմի գլխավոր մասնագետ-ֆինանսիստի և 2-րդ կարգի մասնագետի 01.12.2011թ. անցկացված ատեստավորման փաստաթղթերի փաթեթներում առկա են որոշակի թերություններ: Չնայած նրան, որ աշխատակազմում առկա են համայնքային ծառայության նշված պաշտոնների մրցույթ և ատեստավորում անցկացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտերը, սակայն դրանք սահմանված կարգով չեն արձանագրվել համապատասխան գրանցամատյաններում:

15. Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյան:
16. ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի կողմից Փանիկի համայնքում կադրային գործի վարման գործընթացների ուսումնասիրություններ չեն կատարվել:



ՌՌԻԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




ԱՐՏԱՎԱՋԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ




ՀՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




ԱՐՏՅՈՄ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ



ԶՈՐԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ



ՀՐԱԶԻԿ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ